ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» մայիսի 2022թ. № 316

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-096-0011-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով, ըստ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1395248 վկայականը, Կադաստրի Կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 0600960GXH8PO) և Մուրադ Արամայիսի Հովսեփյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մուրադ Արամայիսի Հովսեփյանին, Կարինե Դանիելի Հովսեփյանին, Անի Մուրադի Հովսեփյանին, Արամայիս Մուրադի Հովսեփյանին և Աննա Մուրադի Հովսեփյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-096-0011-0011 կադաստրային ծածկագրով 0,122 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 148,5 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տանը, 34,80 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ, գյուղ Սարալանջ, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 11 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչ՝ 1822):

2. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մայիսի 02
Կազմեց՝ Գ.Գրիգորյան
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» մայիսի 2022թ. № 317

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ԲԱՐՍԵՂԻ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՄԱՌԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով, ըստ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1954366 վկայականը, Կադաստրի Կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006PWHV4YQ), Թամարա Բարսեղի Հովհաննեսյանի ներկայացուցիչ Գարիկ Համլետի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թամարա Բարսեղի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0014-0034 կադաստրային ծածկագրով 0,112 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 14 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով մառանին տրամադրել «Սպիտակ ք., Առափնյա թաղամաս, 195 մառան» հասցեն (փոստային դասիչ՝ 1801):

2. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻՔ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մայիսի 02
Կազմեց՝ Գ. Գրիգորյան
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 03 » մայիսի 2022թ. № 318

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԳԱՎԱԹ-2022» ՄՐՑԱՇԱՐԻՆ ՖՈՒՏԶԱԼ ԵՎ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՂՄԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿՏՐՈՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, 2022 թվականի մայիսի 1-15-ը Վանաձորում կայանալիք «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ-2022» մրցաշարին ֆուտզալ և սեղանի թենիս մարզաձևերին մասնակցելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ-2022» մրցաշարին ֆուտզալ և սեղանի թենիս մարզաձևերին մասնակցելու համար «Մեծ Պարնի», «Սպիտակ» և «Շիրակամուտ» թիմերի մասնակցությունն ապահովելու նպատակով հատկացնել սեղմած բնական գազի լիցքավորման կտրոններ՝ 66 000 ՀՀ դրամի չափով:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մայիսի 03
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիս 2022թ. № 319

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-0552-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0552-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտավայր հողատեսքի 1,21972 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մայիսի 2022թ. № 320

ՀԵՐՄԻՆԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հերմինե Սանասարի Նիկողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի մայիսի 5-ից Հերմինե Սանասարի Նիկողոսյանին (անձնագիր՝ AU 0639064, տրված 2022 թվականի մարտի 4-ին, 052-ի կողմից) նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 110 000 (հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

3. Հերմինե Սանասարի Նիկողոսյանի համար սահմանվում է շաբաթական 5 աշխատանքային օր՝ օրական 8 ժամ ժամանակով:

4. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մայիսի 04
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մայիսի 2022թ. № 321

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ԹԻՎ 292 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանային հարցերի հանձնաժողով ստեղծելու և Սպիտակի քաղաքապետի 2010 թվականի մարտի 24-ի թիվ 67 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 29 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մայիսի 04
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մայիսի 2022թ. № 322

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացիների բնակարանային պայմանները ստուգելու նպատակով ստեղծել բնակարանային հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Արշակյան – աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար.

Հանձնաժողովի անդամներ՝

Հովիկ Հովհաննիսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ.

Նորայր Յարմալոյան – աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար.

Տիգրան Սաֆարյան - աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար.

Քնարիկ Պետրոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական.

Լուսինե Ավետիսյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մայիս 2022թ. № 323

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-0255-0004 ԵՎ 06-006-0255-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,07071 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Գեոգլոբալ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0255-0004 և 06-006-0255-0005 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված 0,07071 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մայիս 04
ք.Սպիտակ